ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

/2014 թվականի ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի ուղղությամբ ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից իրականացված աշխատանքների մասին/

1. ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ և 132²-րդ հոդվածներ՝ <<Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը>> և <<Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը>>

2014թ. ընթացքում վարույթ է իրականացվել մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման հատկանիշներով հարուցված քրեական **15** գործերով, որոնցից **4**-ը՝ նախկինում հարուցված և 2014թ. փոխանցված գործեր են, **1**-ը՝ նախկինում հարուցված և 2014թ. վերսկսված գործ է, **10** գործերը հարուցվել են 2014թ./որոնցից 1-ը՝ ԱԱԾ-ի կողմից/:

2014թ. ընթացքում հարուցված **10** գործերից **6**-ը վերաբերել են կանանց պոռնկության շահագործմանը, **1**-ը՝ ՀՀ-ում անչափահասների շահագործմանը մուրացկանության մեջ ներգրավելու միջոցով, **1**-ը՝ ՀՀ-ում չափահաս տղամարդու աշխատանքային շահագործմանը, **2**-ը՝ ՌԴ-ում աշխատանքային շահագործմանը: Պոռնկության շահագործման **6** գործերից **3**-ը ներքին թրաֆիքինգի կամ շահագործման դեպքեր են, **1**-ի շահագործումը իրականացվել է ԱՄԷ-ում, **2**-ը՝ Թուրքիայում: ՀՀ-ում պոռնկության շահագործման **3** գործերից **2**-ը վերաբերել են օտարերկրյա կանանց պոռնկության շահագործմանը:

2014թ. ընթացքում վարույթ իրականացված գործերով հայտնաբերվել և տուժող են ճանաչվել՝ 13 զոհեր, որոնցից 11-ը կանայք: Նշված զոհերից 1-ը հանցագործության կատարման ընթացքում եղել է անչափահաս:

Իրենց համաձայնությունը հետագա աջակցություն ստանալու համար տվել և <<Ամքոր Հայաստան>> և <<Հույս և օգնություն>> ՀԿ-ներ են ուղղորդվել **6** զոհեր, ինչպես նաև թրաֆիքինգի ենթարկման վտանգի տակ հայտնված **12** անձինք:

2014թ. ընթացքում նոր մեղադրյալները թվով 9-ն են:

2014թ. ընթացքում վարույթ իրականացված քրեական 15 գործերից **3**-ը ուղարկվել են դատարան, **1** գործ վերավորակվել է ՀՀ քր. օր.-ի 178-րդ հոդվածի հատկանիշներով, **1** գործ վերավորակվել է ՀՀ քր. օր.-ի 140-րդ հոդվածի հատկանիշներով և համաներմամբ կարճվել, **2** գործերի վարույթը կարճվել է, գործերի նյութերով հարուցվել են նոր քրեական գործեր ՀՀ քր. օր.-ի 333-րդ հոդվածի /սուտ մատնություն/ հատկանիշներով, **2** գործերի վարույթները կարճվել են, 1 գործը միացվել է նախկինում թրաֆիքինգի և շահագործման

հատկանիշներով հարուցված այլ քրեական գործի, **5** –ը՝ գտնվում են քննության ընթացքում:

*2014թ. ընթացում 132-րդ և 132²-րդ հոդ. **նոր հարուցված** քր. գործեր*					
Քր. գործ	Նոր զոհ	Նոր մեղադրյալ	Սկզբնաղբյուր երկիր	Վերջնակետ երկիր	Շահագործման ձևը
10	13 *կին-11* *անչափահաս -* 1 *Ուղղորդվել են ՀԿ - 6*	9 *որից* *կին-6*	ՀՀ Չինաստան Թայլանդ ՀՀ	ՀՀ ՀՀ ՀՀ ՀՀ ԱՄԷ Թուրքիա ՀՀ ՌԴ	Պոռնկություն **1 գործ** Պոռնկություն **1 գործ** Պոռնկություն 1 **գործ** Աշխատանքային **1 գործ** Պոռնկություն **1 գործ** Պոռնկություն **2 գործ** Մուրացկանություն **1 գործ** Աշխատանքային **2 գործ**

01.01.2014թ. դրությամբ հետախուզման մեջ են գտնվել **17** անձինք, 2014թ. ընթացքում հայտնաբերվել են հետախուզման մեջ գտնվող երկու անձ, հետախուզում է հայտարարվել 3 անձանց նկատմամբ: 31.12.2014թ.-ի դրությամբ ՀՀ քր. օր.-ի 132-րդ և 132.2-րդ հոդվածների հատկանիշներով հանցագործություն կատարելու համար հետախուզման մեջ են գտնվում թվով **18** անձինք:

2014թ. 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ քր. օր.-ի 132 և 132.2 հոդվածներով հետախուզվողներ			
01.01.2014թ. դրությամբ	2014թ. հայտարարվել է	2014թ. հայտնաբերվել են	01.07.2014թ.դրությամբ
17	**3**	**2**	**18**

2. *ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ և 166.1 հոդվածներ՝* ***<<Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը>> և <<Երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը ներգրավելը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը>>***

2014թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի՝ անչափահասին պոռնկության հետ կապված գործողություններ կատարելուն

ներգրավելու հատկանիշներով քրեական գործեր չեն հարուցվել: Հաշվետու ժամանակահատվածում վարույթ է իրականացվել 2013թ. ՀՀ քրեական օրենսգրքի 166.1-րդ հոդվածի՝ անչափահասին մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը, հատկանիշներով հարուցված 1 քրեական գործով:

3. *ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդված՝ <<**Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը**>>*

2014թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի հատկանիշներով վարույթ է իրականացվել 2014թ. հարուցված 1 քրեական գործով:

4. *ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ, 262-րդ հոդվածներ* ***<<Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը>>*** *և* ***<<Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը>>***

2014թ.-ի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ և 262-րդ հոդվածների հատկանիշներով բացահայտվել են ընդհանուր առմամբ հանցագործության 12 դեպքեր: Նշված դեպքերի մեծ մասը վերաբերում է մահճակալներով սենդի օբյեկտների՝ <<Հյուրանոցային համալիրների>> աշխատակիցների կողմից այլ անձանց պոռնկությամբ զբաղվելուն նպաստելուն:

2014թ. ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից իրականացվել են նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի ոլորտի բարելավմանն ուղղված միջոցառումներ:

Կազմակերպվել և անց է կացվել 2014թ. ընթացքում ՀՀ տարածքում ՀԱՊԿ ձևաչափով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի ուղղությամբ օպերատիվ-հետախուզական համալիր միջոցառումները և հատուկ օպերացիաները, որոնք պատշաճ կատարելու համար մշակվել և հաստատվել է ՀՀ ոստինակության պետի առաջին տեղակալի 06.03.2014թ. թիվ 63 ցուցումը:

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ Գլխավոր վարչության, ԱՎ վարչության և տարածքային ստորաբաժանումների ծառայողների կողմից մի շարք ստուգայցներ են իրականացվել ՀՀ-ում բնակվող օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց բնակության և աշխատավայրերի

հասցեները՝ նրանց աշխատանքային թրաֆիքինգի ենթարկված լինելու հավանականությունը պարզելու նպատակով:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում <<Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման>> խնդիրներին վերաբերվող դասընթացներ են կազմակերպվել ոստիկանության ծառայողների տարբեր խմբերի՝ ընդհանուր առմամբ շուրջ 600 ծառայողների համար, որոնցից 20-ը հանդիսացել են ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողներ: Ոստիկանության ծառայողների կողմից դասախոսություններ են կարդացվել <<Ամքոր Հայաստան>> ՀԿ-ի կողմից կազմակերպված աշխատանքային թրաֆիքինգի խնդիրներին նվիրված դասընթացներին: Անչափահասների հետ աշխատող ոստիկանության ծառայողների համար վերապատրաստման դասընթացներ անցկացնելու նպատակով ՀՀ ոստիկանության կողմից 2014 թվականին մշակվել է <<Անչափահասների արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում>> մոդուլները, որոնցով ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կազմակերպվել և անց են կացվել վերապատրաստման դասընթացներ անչափահասների գործերով թվով 24 ծառայողների համար: ՀՀ ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները մասնակցել են <<Ամքոր Հայաստան>> ՀԿ-ի կողմից կազմակերպված՝ թրաֆիքինգի և փողերի լվացման հետ կապված հանցագործությունների բացահայտման, քննության և քրեական հետապնդման հարցերի, ինչպես նաև նույն ՀԿ-ի կողմից կազմակերպված աշխատանքային թրաֆիքինգի դեպքերի հայտնաբերման և կանխարգելման վերաբերյալ համատեղ սեմինար-քննարկումներին:

Աշխատանքներ են իրականացվել <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում>>, <<Օտարերկրացիների մասին>>, ինչպես նաև <<Թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին>> ՀՀ օրենքների նախագծերի լրամշակման ուղղությամբ: Նշված նախագծերը 2014թ. դեկտեմբեր ամսին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են երրորդ ընթերցմամբ:

Հասարակության իրազեկումը բարձրացնելու նպատակով <<Աուդիո վիզուալ լրագրողների ասոցիացիա>> ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում <<02>> և <<Հերթապահ մաս>> հեռուստահաղորդումներով ցուցադրվել են մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ մի շարք սոցիալական տեսահոլովակներ: Նշված հեռուստահաղորդումների շրջանակներում պարբերաբար հեռարձակվել են համապատասխան թեմատիկ հաղորդումներ, տեսաբանվել են մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ տեսահոլովակները:

Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել մի շարք հեռուստաընկերությունների կողմից թրաֆիքինգի թեմաներով նախապատրաստված հաղորդումներին: <<police.am>> կայքէջում առանձին հղումով ստեղծված թրաֆիքինգին վերաբերող հավելվածում շարունակվել է թրաֆիքինգի վերաբերյալ համապատասխան նյութերի տեղադրումը:

Անչափահասների շրջանում մուրացկանության և թափառաշրջիկության դեպքերը նախականխելու, վերջիններիս մուրացկանության մեջ ներգրավող անձանց հայտնաբերելու /անչափահասների թրաֆիքինգի և շահագործման ենթարկելու ռիսկի նվազեցման/, ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալի 10.02.2014թ. թիվ 48 ցուցումի պահանջների համաձայն 2014թ.-ին կազմակերպվել և անց են կացվել լայնածավալ միջոցառումներ, այդ թվում նաև ստուգայց շրջագայություններ, որոնց ընթացքում անչափահասների հետ իրականացվել են կանխարգելիչ աշխատանքներ:

Անչափահասների շրջանում կանխարգելիչ դաստիրակչական աշխատանքներ իրականացնելու, ինչպես նաև անչափահասների նկատմամբ կատարվող բռնություններից նրանց զերծ պահելու նպատակով՝ ս.թ. ապրիլ ամսին ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների ուժերով, սպասարկվող վարչական տարածքներում գործող դպրոցներում կազմակերպվել են հանդիպումներ, զրույցներ, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել անչափահասների թրաֆիքինգի կամ շահագործման խնդիրներին:

2014թ. ընթացքում ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ են այցելել ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան անվտանգության կցորդը, Ինտերպոլի Գլխավոր քարտուղարության ներկայացուցիչը, ՀՀ-ում Արգենտինայի դեսպանատան աշխատակիցները, որոնց հետ քննարկումներ են անցկացվել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ ուղղված պայքարի ոլորտում իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեպքերի, ինչպես նաև նշված հանցագործությունները կատարելու մեղադրանքով միջազգային հետախուզման մեջ գտնվող անձանց վերաբերյալ ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի միջոցով Թուրքիայի, ԱՄԷ-ի և Չինաստանի իրավապահ մարմիններին ուղարկվել են համապատասխան հարցումներ և տեղեկատվություն:

Մի շարք հարցումներ և քննչական պահանջներ են ուղարկվել նաև ՌԴ ՆԳՆ կենտրոնական և տարածքային համապատասխան ստորաբաժանումներին՝ ՀՀ քաղաքացիներին Ռուսաստանի Դաշնությունում աշխատանքային շահագործման ենթարկելու կապակցությամբ նախապատրաստվող նյութերի և քննվող քրեական գործերի շրջանակներում:

Ոստիկանության աշխատակիցները ակտիվ մասնակցություն են ունեցել տեղական և միջազգային խորհրդաժողովներին, սեմինարներին և հանդիպումներին:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ